ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

   Արթուր Համբարձումյան, Սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Վաշինգտոն (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 2025 թվականի փետրվարի 24-ից մինչև մարտի 1-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝** Համաշխարհային բանկ և ՅՈՒՆԻՍԵՖ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից կազմակերպվող «Հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանն ուղղված ռազմավարությունների ու ծրագրերի ավելի արդյունավետ ֆինանսավորման» թեմայով տեխնիկական սեմինարին

5. **Քննարկված թեմաները.**

- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացմանն ուղղվող ծախսերի ներկայացում մասնակից երկրների ներկայացուցիչների կողմից,
- Հաշմանդամության խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականությունները,
- Հիմնական ոլորտներում (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) իրականացվող հաշմանդամության աջակցության ծրագրերը,
- Հաշմանդամների համար ծառայությունների և ենթակառուցվածքների հավասար հասանելիության ֆինանսավորումը,
- Ֆինանսավորման աղբյուրները՝ ներքին, միջազգային մասնավոր հատված և քաղաքացիական հասարակություն,

- Ընդհանուր մարտահրավերներն ու առաջընթացը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ֆինանսավորման գործում՝ ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում,
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ֆինանսավորման համար տվյալների բազաների ստեղծումը,
- Միջազգային համագործակցության շրջանակներում ֆինանսավորման հնարավորություններ և մարտահրավերներ,
- Հաշմանդամություն ունեցող երեխաների և մեծահասակների իրավունքների իրացման ֆինանսավորման կարողությունների զարգացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից կազմակերպված «Հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանն ուղղված ռազմավարությունների ու ծրագրերի ավելի արդյունավետ ֆինանսավորման» թեմայով տեխնիկական սեմինարին Հայաստանից մասնակցում էին երկու ներկայացուցիչ, երկրորդը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Սեմինարն իրականացվում էր միաժամանակյա առկա և առցանց ռեժիմով, որին մասնակցում էին ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Սեմինարի ընթացքում Հայաստանի և այլ մասնակից երկրների ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային կառույցների ներկայացուցիչների (ՀԲ, ՅՈՒՆԻՍԵՖ, GIZ, ՄԶԳ և այլ կառույցներ) կողմից ներկայացվել են շնորհանդեսներ, որոնց վերաբերյալ հարցուպատասխանի ռեժիմով իրականացվել են քննարկումներ: Կազմակերպվել է նաև խմբային աշխատանք, որի արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և իրականացվել են քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում չի իրականացվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

03.03.2025թ.

Digitally signed by artur.hambardzumyan@minfin.am
Date: 2025.03.03 20:46:18 AMT